

22 - 30 Ապրիլ

Ախորժեղի եղանակներ:

Գինովությունը կշարունակուի:

Էրիկ մը կնիկէն ծեծ կ'ուտէ հակիթ գնած չըլլալուն համար:

Եպիսկոպոսին մէկը ինքզինքը կերուխումի տուած՝ կմերժէ գաւառի մ'առաջնորդութիւնն քաջառողջութեան պատճառաւ:

Այս ամսոյս մէջ ծնող մանչերը խաբեբայ ու մեծ վաճառական կ'ըլլան, աղջիկներն ալ տնտեսագէտ ու գեղեցիկ, միայն թէ քիթերնին քիչ մեծ կ'ըլլայ:

ՄԱՅԻՍ

1 - 7 Մայիս

Յստակ օդ:

Գիւղագնացութեան պատճառաւ ամեն տուն մէյմէկ քիչ կռիւ:

Առուտուրները բացուեցան:

Ոսկերչաց շուկայն լի է բազմութեամբ. արժան մատնիներ, օղեր, ապարանջաններ, մանեակներ կծախէ ժողովուրդն աճուրդով, եւ ոսկերիչները կգնեն:

Հազարաւոր տուներ, գետիններ կը վաճառուին խիստ արժան գնով:

Խմբագիրները տան միջնորդ կդառնան:

Աստուած վերջերնիս բարի ընէ:

8 - 13 Մայիս

Օդը կշարունակէ յստակությունը:

Մութի մէջ խնդիրներ կան, որոց ոչ ոք կրնայ վերահասու ըլլալ:

Կանանց շրջագգեստները քիչ մ'ալ կը կարճնան: Քանի մը կանայք էրիկ մարդու հագուստ կհագնին:

Հունձքերը լաւ երեւոյթ ունին, բայց հասկերուն մէջ բան չկայ. – իմաստակ հասկեր:

14 - 20 Մայիս

Դեսպան մ'ուրիշ դեսպանի մը տունը կը հրաւիրուի կերակուրի: